այլ կցուած է եկեղեցւոյն հետ. այս մասին մէջ կանգնող ժողովուրդը, երեք դրանց կամարաց մէջէն կարող է տեսնել սրբազան պաշտամունքը։ Ունի եկեղեցիս իւր անանուն նահատակը, որ պաշտպան է ընդդէմ ջերմախտի։

Առ հասարակ Թէոդոսիոյ եկեղեցիք անզարդ են, և չեն համապատասխանել մի ձեռագրի մէջ գտնուած տողերուն.

«Քէֆէ քաղաք ծովահայեաց,
Եկեղեցիքը զարդարած»։

Անշուշտ այս տողերը գրողը՝ վերջին, այն է 1779 ին, Հայոց ի Ղրիմէ եկնելէն առաջ տեսել և գրել է Կաֆայի եկեղեցիներու զարդերու մասին, և հաւանական է ենթադրելը հետերնին տարել են բոլոր եկեղեցեաց զարդարանքը. և վերջին հարիւր տարուան միջոցին կարող չեն եղած եկեղեցիք իրենց նախկին յարդն ու զարդը ունենալ ժողովրդոց սակաւութեան պատճառաւ։

Ս. ԿԱՐԱՊԵՏ

Սրբոյն Սարգսի և սրբոց Հրեշտակապետաց եկեղեցեաց վրայ համառօտ ակնարկս ընելէն վերջ, պատշաճ կը համարիմ լռելով չանցնիլ մի փոքրադիր, այլ յոյժ գեղեցիկ և վայելչադիր, երբեմն հայ եկեղեցւոյ մասին, ուր այժմ Ռուսք կը պատարագեն, այն է արգելանոցի Ս. Կարապետի կամ Ս. Օվանիսի մասին։

Արգելանոցը՝ որ քաղքին արևելեան ծայրը կ'իյնայ, չորս կողմանէ պարսպած, ժամանակաւ Հայոց